**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1**
**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի**
**2026թ. սեպտեմբերի 9-ի նիստի**

Գիտական խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 25-ը: Նիստը նախագահում էր խորհրդի նախագահ, դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար, տ.գ.թ., դոցենտ Հ. Մարգարյանը: Գիտական խորհրդի նախագահ, դեկան Կ. Խաչատրյանը ողջունեց գիտխորհրդի անդամներին՝ նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ և հույս հայտնեց, որ համատեղ ջանքերով կիրագործվեն ինչպես նախորդ ուսումնական տարում պլանավորված, այնպես էլ ընթացս ձեռնարկվող նախագծերը՝ մաղթելով բեղուն ու արգասաբեր աշխատանք:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը հաստատվեց միաձայն (օրակարգը կցվում է):

## ՕՐԱԿԱՐԳ

1. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորում
2. Նոր ընդունված, առկա ուսուցմամբ ասպիրանտների թեմաների և ղեկավարների հաստատում
3. Անվանական կրթաթոշակառուների հաստատում
4. Պրոֆեսորի օգնականների հաստատում
5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի արտալսարանային գործունեության գնահատման կարգի (նոր խմբագրությամբ) հաստատում
6. Ընթացիկ հարցեր

### 1. Հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորում

Դեկան Կ. Խաչատրյանը ներկայացրեց ատեստավորվող 9 հայցորդներին և հեռակա ուսուցմամբ 4 ասպիրանտներին: Նշեց, որ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը հայցորդներ և հեռակա ուսուցմամբ ասպիրանտներ չունի, և օրակարգի առաջին հարցի քննարկումը՝ ըստ ամբիոնների, սկսելու համար ձայնը փոխանցեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանին:

**1.1 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման մասին հարցը:

**1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Կառավարման և գործարարության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնը ունի 5 հայցորդ՝ Հակոբյան Շուլի Արմենի (4-րդ տարի), Մարտիրոսյան Արմեն Աքիլեսի (2-րդ տարի), Գյուրջյան Մարիամ Արտեմի (1-ին տարի), Մինասյան Գոհար Ղևոնդի (1-ին տարի), Սողոմոնյան Տաթևիկ Զորիկի (1-ին տարի), և հեռակա ուսուցմամբ 3 ասպիրանտ՝ Խեքոյան Անահիտ Վահագնի (1-ին տարի), Եղյան Ելենա Արմենի (1-ին տարի), Ավետիսյան Հայարփի Վաղթանգի (1-ին տարի):

Տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանը ներկայացրեց ամբիոնի հայցորդների և հեռակա ուսուցմամբ ասպիրանտների հաշվետու տարում կատարած աշխատանքները:

**Շուլի Արմենի Հակոբյանի** «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները ՀՀ Շիրակի մարզում» թեմայով (գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Կ. Գ. Խաչատրյան) ատենախոսության շրջանակում կատարվել է մասնագիտական գրականության ուսումնասիրություն, հավաքագրվել են վիճակագրական տվյալներ 3-րդ գլխի վերաբերյալ, և ավարտական փուլում է գտնվում 2-րդ գլուխը:

**Արմեն Աքիլեսի Մարտիրոսյանը** «Սոցիո-մշակութային գործոնի կառավարման հիմնահարցերը կայուն զարգացման նպատակների համատեքստում» թեմայով (գիտական ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Լ. Սարգսյան) ատենախոսությունը հաջողությամբ պաշտպանել է ս.թ. հուլիսի 6-ին՝ ժամկետից շուտ, սակայն բարձրագույն կրթության երրորդ մակարդակի գործող կարգի համաձայն՝ ենթակա է ատեստավորման:

**Մարիամ Արտեմի Գյուրջյանի** «ՀՀ հարկային քաղաքականության կատարելագործման հիմնահարցերը կայուն զարգացման համատեքստում» թեմայով (գիտական ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Լ. Սարգսյան) ատենախոսության շրջանակում կատարվել է մասնագիտական գրականության ուսումնասիրություն և 1-ին գլխի վերաբերյալ նյութերի հավաքագրում: Մասնակցել է «Անգլերեն լեզու», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Գիտաչափություն և գիտական շտեմարաններ», «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն», «Համալսարանական դասավանդման դիդակտիկա», «Արհեստական բանականության էթիկա» դասընթացներին և կուտակել է 24 կրեդիտ:

**Գոհար Ղևոնդի Մինասյանի** «Արհեստական բանականության գործիքակազմի ազդեցությունը գործարար գործընթացների արդյունավետության վրա (SS ոլորտի կազմակերպությունների օրինակով)» թեմայով (գիտական ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Լ. Սարգսյան) ատենախոսության շրջանակում կատարվել է մասնագիտական գրականության ուսումնասիրություն և հետազոտության մեջ կիրառելի մեթոդաբանական մոդելների ընտրություն: Մասնակցել է «Անգլերեն լեզու», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Անձնային աճ և ինքնակարգավորում», «Գիտաչափություն և գիտական շտեմարաններ», «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում», «Կայուն զարգացում և գլոբալ մարտահրավերներ», «Արհեստական բանականության էթիկա», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացներին և կուտակել է 30 կրեդիտ: Հաջողությամբ ավարտել է Microsoft Learn հարթակի կողմից կազմակերպված Anthropic Academy-ի երեք դասընթացները՝ Claude 101, AI Capabilities and Limitations, AI Fluency Framework Foundations:

**Տաթևիկ Զորիկի Սողոմոնյանի** «Տեխնոլոգիահենք տնտեսական զարգացման հիմնախնդիրները և հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով (գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Վ. Ս. Ալեքսանյան) ատենախոսության շրջանակում կատարվել է գիտական գրականության ուսումնասիրություն և նյութերի հավաքագրում: Մշակվել է ատենախոսության 1-ին գլուխը, 1 հոդված պատրաստ է տպագրության: Մասնակցել է «Անգլերեն լեզու», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացներին և կուտակել է 15 կրեդիտ:

**Անահիտ Վահագնի Խեքոյանի** «Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա թվային փոխակերպման սոցիալ-տնտեսական ազդեցության գնահատումը» թեմայով (գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Կ. Գ. Խաչատրյան) ատենախոսության շրջանակում կատարվել է տեղական և միջազգային գիտական գրականության ուսումնասիրություն և նյութերի հավաքագրում: Հավաքագրվել և նախնական վերլուծության են ենթարկվել Հայաստանի տնտեսության թվայնացման գործընթացները բնութագրող վիճակագրական տվյալներ: Հետազոտական հմտությունների զարգացման նպատակով մասնակցել է American Research Institute of the South Caucasus (ARISC) Research Ethics Workshop ծրագրին, որի շրջանակում նաև մշակել և նախապատրաստել է ատենախոսության շրջանակում նախատեսվող հարցազրույցների իրականացման համար անհրաժեշտ IRB փաստաթղթերի ցանկը: Մասնակցել է «Անգլերեն լեզու», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Անձնային աճ և ինքնակարգավորում», «Գիտաչափություն և գիտական շտեմարաններ», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացներին և կուտակել է 18 կրեդիտ:

**Ելենա Արմենի Եղյանի** «Միջազգային տարանցիկ տրանսպորտային ուղիների արդյունավետության բարձրացումը լոգիստիկական ենթակառուցվածքի և կենտրոնների զարգացման միջոցով (ՀՀ օրինակով)» թեմայով (գիտական ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Վ. Գ. Աբրահամյան) ատենախոսության 1-ին գլուխը պատրաստ է: Կատարվել է մասնագիտական գրականության ուսումնասիրություն և 2-րդ գլխի վերաբերյալ նյութերի հավաքագրում: Ելույթով հանդես է եկել ԵՊՀ-ում կայացած հայ-չինական համագործակցության վերաբերյալ համաժողովին: Մասնակցել է «Անգլերեն լեզու», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Անձնային աճ և ինքնակարգավորում», «Գիտաչափություն և գիտական շտեմարաններ», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» դասընթացներին և կուտակել է 18 կրեդիտ: 1 հոդված պատրաստ է տպագրության:

**Հայարփի Վաղթանգի Ավետիսյանի** «Կայուն զարգացման նպատակների և կանաչ տնտեսության փոխառնչությունները կառավարման համատեքստում» թեմայով (գիտական ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Լ. Սարգսյան) ատենախոսության շրջանակում կատարվել է մասնագիտական գրականության ուսումնասիրություն և նյութերի հավաքագրում: Պատրաստ է ատենախոսության առաջին գլուխը, տպագրվել է 1 հոդված:

Հարցեր չինչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

**2.** Դեկան Կ. Խաչատրյանը նշեց, որ Կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդները և հեռակա ուսուցմամբ ասպիրանտները հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են ներկայացվող պահանջներին համապատասխան, ինչը բավարար հիմք է ատեստավորման համար և առաջարկեց՝ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանի միջնորդությունը ատեստավորման հարցի վերաբերյալ դնել քվեարկության:

Քվեարկության արդյունքներն են՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**1.1 ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 02.09.2026թ. թիվ 1 նիստի որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքներն ու խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հայցորդներ Շուլի Արմենի Հակոբյանի (4-րդ տարի), Արմեն Աքիլեսի Մարտիրոսյանի (2-րդ տարի), Մարիամ Արտեմի Գյուրջյանի (1-ին տարի), Գոհար Ղևոնդի Մինասյանի (1-ին տարի), Տաթևիկ Զորիկի Սողոմոնյանի (1-ին տարի) և հեռակա ուսուցմամբ ասպիրանտներ Անահիտ Վահագնի Խեքոյանի (1-ին տարի), Ելենա Արմենի Եղյանի (1-ին տարի), Հայարփի Վաղթանգի Ավետիսյանի (1-ին տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և նրանց ատեստավորել:

**1.2 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման մասին հարցը:

**1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Ֆինանսահաշվային ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ Գ. Սահակյանը՝ նշելով, որ ամբիոնը ունի 2 հայցորդ՝ Կարախանյան Անահիտ Արտաշեսի (2-րդ տարի), Գրիգորյան Ռաֆիկ Գրիշայի (1-ին տարի), իսկ հեռակա ուսուցմամբ ասպիրանտներ՝ չունի:

Տ.գ.թ., դոցենտ Գ. Սահակյանը ներկայացրեց ամբիոնի հայցորդների հաշվետու տարում կատարած աշխատանքները:

**Անահիտ Արտաշեսի Կարախանյանը** «Հարկային քաղաքականության մշակման և իրականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման գործում» թեմայով (գիտական ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Դ. Ն. Հախվերդյան) ատենախոսության առաջին գլուխն ավարտել է: Աշխատել է ատենախոսության երկրորդ գլխի վրա, որն ունի գրեթե ավարտուն տեսք: «Հարկային համակարգի դերը և տեսագործնական նշանակությունը» ու «Հարկման գործառույթների իրականացման ապահովումը՝ ըստ հարկային բեռի բաշխման» վերնագրերով գիտական հոդվածները հրատարակվել են Գ. Վ. Պլեխանովի անվան Ռուսաստանի տնտեսագիտական համալսարանի Երևանի մասնաճյուղի «Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ» գիտական հոդվածների ժողովածուում: Տպագրության նախապատրաստական փուլում է գտնվում ևս երկու հոդված: Մասնակցել է կրթական բաղադրիչի «Անգլերեն լեզու» դասընթացին (4 կրեդիտ) և ապահովել նախատեսված կրեդիտները:

**Ռաֆիկ Գրիշայի Գրիգորյանը** «Հարկային հաշվառման արդի հիմնախնդիրները ՀՀ բուհերում» թեմայով (գիտական ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հ. Գ. Մնացականյան) ատենախոսության շրջանակում ուսումնասիրել է հիմնախնդրին վերաբերող տեսական գրականությունը: Ձևակերպել է ատենախոսության արդիականությունը, հիմնական նպատակներն ու խնդիրները: Ատենախոսության առաջին գլուխը պատրաստ է: Մասնակցել է կրթական բաղադրիչի պարտադիր ու կամընտրական դասընթացներին և հանձնել քննությունները՝ կուտակել է 18 կրեդիտային միավոր, այդ թվում՝ «Անգլերեն լեզու» (4 կրեդիտ), «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» (4 կրեդիտ), «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» (4 կրեդիտ), «Անձնային աճ և ինքնակարգավորում» (3 կրեդիտ), «Գիտաչափություն և գիտական շտեմարաններ» (3 կրեդիտ): Գիտամանկավարժական պրակտիկայի համար ներկայացրել է համապատասխան տեղեկանք աշխատանքի վայրից (ԵՊՀ հաշվապահություն):

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

**2.** Դեկան Կ. Խաչատրյանը նշեց, որ Ֆինանսահաշվային ամբիոնի հայցորդները հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են ներկայացվող պահանջներին համապատասխան, ինչը բավարար հիմք է ատեստավորման համար և առաջարկեց՝ Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ Գ. Սահակյանի միջնորդությունը ատեստավորման հարցի վերաբերյալ դնել քվեարկության:

Քվեարկության արդյունքներն են՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**1.2 ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հիմք ընդունելով Ֆինանսահաշվային ամբիոնի 31.08.2026թ. թիվ 1 նիստի որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքներն ու խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հայցորդներ Անահիտ Արտաշեսի Կարախանյանի (2-րդ տարի), Ռաֆիկ Գրիշայի Գրիգորյանի (1-ին տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և նրանց ատեստավորել:

**1.3 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման մասին հարցը:

**1.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների և հայցորդների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Խառատյանը՝ նշելով, որ ամբիոնը ունի 2 հայցորդ՝ Մաշուրյան Ռաֆիկ Գագիկի (4-րդ տարի), Բաղդասարյան Հայկ Վարդանի (2-րդ տարի) և հեռակա ուսուցմամբ 1 ասպիրանտ՝ Պռազյան Արեգա Հարությունի (2-րդ տարի):

Տ.գ.թ., դոցենտ Ա. Խառատյանը ներկայացրեց ամբիոնի հայցորդների և հեռակա ուսուցմամբ ասպիրանտի հաշվետու տարում կատարած աշխատանքները:

**Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանը** «Կազմակերպությունների խմբի ֆինանսական և գործառնական կառավարման մոդելավորման հիմնախնդիրները» թեմայով (գիտական ղեկավար՝ տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա. Հ. Առաքելյան) ատենախոսությունը հաջողությամբ պաշտպանել է ս.թ. օգոստոսի 27-ին՝ ժամկետից շուտ, սակայն բարձրագույն կրթության երրորդ մակարդակի գործող կարգի համաձայն՝ ենթակա է ատեստավորման:

**Հայկ Վարդանի Բաղդասարյանի** «Ջրային կուլտուրաների և անտառային տնտեսության զարգացման ազդեցության գնահատումը ՀՀ կայուն զարգացման վրա» թեմայով (գիտական ղեկավար՝ տեխ.գ.դ., պրոֆեսոր Ա. Հ. Առաքելյան) ատենախոսության

շրջանակում իրականացվել են հետազոտական աշխատանքներ և ուսումնասիրություններ՝ շինշիլաների բուծման շահութաբերության վերաբերյալ: 1 գիտական հոդված գտնվում է ավարտման փուլում:

**Արեգա Հարությունի Պռազյանի** «Մարդ-համակարգիչ փոխազդեցության կիրառումը կազմակերպությունների ֆինանսական ռիսկերի գնահատման գործընթացում» թեմայով (գիտական ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Ա. Գևորգյան) ատենախոսության շրջանակում կատարվել է գիտական գրականության և առկա հետազոտությունների խորքային ուսումնասիրություն: Մրցութային հիմունքներով ասպիրանտն ընտրվել է «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2025»-ի շահառու, որի շրջանակում կատարվող գիտահետազոտական աշխատանքներն ուղղված են ատենախոսության թեմայով նախատեսված խնդիրների լուծմանը: Ատենախոսության փորձարարական հատվածի մշակման նպատակով իրականացվել է հետազոտություն, որում ներգրավվել է 55 մասնակից: Դրա արդյունքում հավաքագրվել է բավարար ծավալի ու որակի տվյալների բազա, ինչը հնարավորություն է տալիս կատարել հետագա վիճակագրական վերլուծություններ և ստանալ թեմայի նպատակներին համապատասխան գիտական արդյունքներ:

Հարցեր չինչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

**2.** Դեկան Կ. Խաչատրյանը նշեց, որ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հայցորդները և հեռակա ուսուցմամբ ասպիրանտը հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են ներկայացվող պահանջներին համապատասխան, ինչը բավարար հիմք է ատեստավորման համար և առաջարկեց՝ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Խառատյանի միջնորդությունը ատեստավորման հարցի վերաբերյալ դնել քվեարկության:

Քվեարկության արդյունքներն են՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**1.3 ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 04.09.2026թ. թիվ 2 նիստի որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքներն ու խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հայցորդներ Ռաֆիկ Գագիկի Մաշուրյանի (4-րդ տարի), Հայկ Վարդանի Բաղդասարյանի (2-րդ տարի) և հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արեգա Հարությունի Պռազյանի (2-րդ տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և նրանց ատեստավորել:

**2. Նոր ընդունված, առկա ուսուցմամբ ասպիրանտների թեմաների և ղեկավարների հաստատում**

Դեկան Կ. Խաչատրյանը ներկայացրեց 2026-2027 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելության արդյունքները: Նշեց, որ Կառավարման և գործարարության ամբիոնի գծով հաստատված 2 տեղը լրացվել է (ընդունվել է 2 ասպիրանտ), իսկ Ֆինանսահաշվային ամբիոնի գծով հաստատված 1 տեղը մնացել է թափուր: Նշեց, որ մինչև ս.թ. նոյեմբերի 9-ը գիտական ղեկավարման իրավունք ունեցող գործընկերները կարող են ներկայացնել 2027-2028 ուսումնական տարվա՝ առկա և հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի անվճար տեղերի հաստատման ուղղություններն ու հիմնավորումները, որպեսզի հերթական նիստում գիտական խորհուրդը քննարկի դրանց երաշխավորման հարցը: Հարցի քննարկման համար ձայնը տրվեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանին:

**2.1 ԼՍԵՑԻՆ.** Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված, առկա ուսուցմամբ ասպիրանտների ատենախոսության թեմաների և գիտական ղեկավարների հաստատման մասին հարցը:

**2.1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված, առկա ուսուցմամբ ասպիրանտ Սաթի Շանթի Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է ասպիրանտի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Մարդկային կապիտալի կառավարման հիմնահարցերը ՀՀ տնտեսության ինովացիոն զարգացման համատեքստում» վերտառությամբ, իսկ գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Վարդան Ալեքսանյանը:

Հարցեր չինչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

**2.** Դեկան Կ. Խաչատրյանը առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանի միջնորդությունը դնել քվեարկության:

Քվեարկության արդյունքներն են՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**2.1.1 ՈՐՈՇԵՑԻՆ.** Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 02.09.2026թ. թիվ 1 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված, առկա ուսուցմամբ ասպիրանտ Սաթի Շանթի Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության

թեման՝ «Մարդկային կապիտալի կառավարման հիմնահարցերը ՀՀ տնտեսության ինովացիոն զարգացման համատեքստում» վերտառությամբ, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ, իսկ գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Վարդան Ալեքսանյանին:

**2.1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված, առկա ուսուցմամբ ասպիրանտ Հայկուհի Գագիկի Հովակիմյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի նիստում հաստատվել է ասպիրանտի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Ինստիտուցիոնալ կառավարման հիմնահարցերը նորարարությունների խթանման համատեքստում (ՀՀ օրինակով)» վերտառությամբ, իսկ գիտական ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Սարգսյանը:

Հարցեր չինչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

**2.** Դեկան Կ. Խաչատրյանը առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանի միջնորդությունը դնել քվեարկության:

Քվեարկության արդյունքներն են՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**2.1.2 ՈՐՈՇԵՑԻՆ.** Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 02.09.2026թ. թիվ 1 նիստի որոշումը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի նոր ընդունված, առկա ուսուցմամբ ասպիրանտ Հայկուհի Գագիկի Հովակիմյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Ինստիտուցիոնալ կառավարման հիմնահարցերը նորարարությունների խթանման համատեքստում (ՀՀ օրինակով)» վերտառությամբ, Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ, իսկ գիտական ղեկավար՝ տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Սարգսյանին:

**3. ԼՍԵՑԻՆ.** 2026-2027 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակներ նշանակելու մասին հարցը:

**3. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Դեկան Կ. Խաչատրյանը նշեց, որ Երևանի պետական համալսարանը 4 անվանական կրթաթոշակ է սահմանել ֆակուլտետի բարձր առաջադիմությամբ և հասարակական ակտիվությամբ աչքի ընկնող ուսանողների համար և օրակարգի երրորդ

հարցի քննարկման համար ձայնը փոխանցեց ֆակուլտետի դեկանի տեղակալ Ա. Խալաթյանին:

**2.** Դեկանի տեղակալ Ա. Խալաթյանը նշեց, որ սահմանված կրթաթոշակներին կարող են հավակնել 4 կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ցուցաբերած ուսանողները: Հավելեց, որ անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների ընտրությունը կատարվել է գործող կարգի պահանջներին համապատասխան և ներկայացրեց հավակնորդներին՝ Ասյա Արթուրի Պողոսյան (կառավարում, 4-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,94), Միլենա Հապետնակի Հայրապետյան (ֆինանսներ, 4-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,14), Լիլյա Սերգոյի Ամիրաղյան (տնտեսագիտություն, 3-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,35), Արփինե Վազգենի Աղեկյան (ֆինանսներ, 3-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,95):

**3.** Դեկան Կ. Խաչատրյանը առաջարկեց 2026-2027 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում անվանական կրթաթոշակներ նշանակելու հարցը դնել քվեարկության:

Քվեարկության արդյունքներն են՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**3. ՈՐՈՇԵՑԻՆ.**

1) «Կառավարում» մասնագիտության բակալավրի առկա ուսուցմամբ 4-րդ կուրսի ուսանողուհի Ասյա Արթուրի Պողոսյանին երաշխավորել ստանալու Գրիգոր Տաթևացու անվան կրթաթոշակ:

2) «Ֆինանսներ» մասնագիտության բակալավրի առկա ուսուցմամբ 4-րդ կուրսի ուսանողուհի Միլենա Հապետնակի Հայրապետյանին երաշխավորել ստանալու Ստեփան Սիտարյանի անվան կրթաթոշակ:

3) «Տնտեսագիտություն» մասնագիտության բակալավրի առկա ուսուցմամբ 3-րդ կուրսի ուսանողուհի Լիլյա Սերգոյի Ամիրաղյանին երաշխավորել ստանալու Գրիգոր Հարությունյանի անվան կրթաթոշակ:

4) «Ֆինանսներ» մասնագիտության բակալավրի առկա ուսուցմամբ 3-րդ կուրսի ուսանողուհի Արփինե Վազգենի Աղեկյանին երաշխավորել ստանալու Գրիգոր Հասրաթյանի անվան կրթաթոշակ:

Օրակարգի 3-րդ հարցի քննարկումն ամփոփելով և անվանական կրթաթոշակների կարևորությունն ընդգծելով՝ դեկան Կ. Խաչատրյանը նշեց, որ 2023 թվականից «Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ-ի հետ կնքված եռակողմ հուշագրի շրջանակում ֆակուլտետի 5 լավագույն ուսանողների տրամադրվում է կրթաթոշակ՝ ուսումնական տարվա համար յուրաքանչյուրին 1 միլիոն ՀՀ դրամ: Նա հավելեց, որ գիտխորհրդի կողմից այս կրթաթոշակի հաստատման պահանջ չկա, սակայն անհրաժեշտ համարեց ներկայացնել այն ուսանողներին, ովքեր արժանացել են սահմանված կրթաթոշակին՝ 2026-2027 ուսումնական տարվա համար. Ասոյան Մկրտիչ Հրաչյայի (ֆինանսներ, 4-րդ կուրս, ՄՈԳ՝

19,93), Ուզունյան Մանուշակ Դավիթի (ֆինանսներ, 4-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,06), Բալայան Բենիկ Արտեմի (կառավարում, 4-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,94), Այվազյան Լիանա Էդգարի (կառավարում, 4-րդ կուրս, ՄՈԳ՝ 18,85), Գաբրիելյան Լիանա Հմայակի (կառավարում, 3-րդ կուրս, ՄՈԳ՝ 19,65):

**4. ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորի օգնականների հաստատում**

Դեկան Կ. Խաչատրյանը հայտնեց, որ Երևանի պետական համալսարանում գործող «Պրոֆեսորադասախոսական կազմի օգնականի ներգրավելու կարգի» համաձայն՝ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի սկզբում ֆակուլտետի գիտխորհուրդը քննարկում է պրոֆեսորի օգնականներ նշանակելու հարցը: Նշեց, որ ավանդաբար այս հարցում միջնորդություն էր ներկայացնում միայն Կառավարման և գործարարության ամբիոնը, սակայն այս տարի միջնորդություն են ներկայացրել ֆակուլտետում գործող բոլոր ամբիոնները՝ բացառությամբ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի: Օրակարգի չորրորդ հարցի քննարկումը՝ ըստ ամբիոնների, սկսելու համար ձայնը փոխանցեց Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ. Հայրապետյանին:

**4.1 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսորի օգնականներ նշանակելու մասին հարցը:

**4.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի պրոֆեսորի օգնականներ նշանակելու միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ. Հայրապետյանը՝ նշելով, որ գործող կարգով առաջնորդվելով իրազեկել են ֆակուլտետի ասպիրանտներին և մագիստրատուրայի ուսանողներին, հավաքագրել են ստացված հայտադիմումները: Ընդգծեց, որ մագիստրատուրայի ուսանողների համար այս գործառույթը համարժեք է մասնագիտական պրակտիկային, իսկ ասպիրանտների համար՝ գիտամանկավարժական բաղադրիչին: Հավելեց, որ պրոֆեսորի օգնական ունենալու ցանկություն է հայտնել ամբիոնի 1 աշխատակից՝ դոցենտ, տ.գ.թ. Հ. Հովհաննիսյանը: Գործող կարգի համաձայն՝ անձին որպես պրոֆեսորի օգնական ներգրավելու երաշխավորությունը քննարկվել է Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի նիստում:

**2**. Դեկան Կ. Խաչատրյանը առաջարկեց պրոֆեսորի օգնականներ նշանակելու վերաբերյալ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ընդունած որոշումը հաստատել քվեարկությամբ:

Քվեարկության արդյունքներն են՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**4.1 ՈՐՈՇԵՑԻՆ.** Հիմք ընդունելով ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 31.08.2026թ. թիվ 1 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ 2026-2027 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի համար «Միջազգային տնտեսական հարաբերություններ» կրթական ծրագրի ղեկավար, դոցենտ, տ.գ.թ. Հասմիկ Վաղինակի Հովհաննիսյանի օգնական նշանակել նույն կրթական ծրագրի առկա ուսուցմամբ 1-ին կուրսի մագիստրանտ Մարգարիտա Առաքելյանին:

**4.2 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսորի օգնականներ նշանակելու մասին հարցը:

**4.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսորի օգնականներ նշանակելու միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբջանյանը՝ նշելով, որ պրոֆեսորի օգնական ունենալու ցանկություն են հայտնել ամբիոնի 8 աշխատակից՝ դոցենտ, տ.գ.թ. Կ. Խաչատրյանը, դոցենտ, տ.գ.թ. Ա. Հակոբջանյանը, պրոֆեսոր, տ.գ.դ. Հ. Սարգսյանը, պրոֆեսոր, տ.գ.դ. Գ. Վարդանյանը, դոցենտ, տեխ.գ.թ. Հ. Զաքոյանը, դոցենտ, տ.գ.թ. Վ. Ալեքսանյանը, դոցենտ, տ.գ.թ. Ն. Խաչատրյանը, դոցենտ, տ.գ.թ. Կ. Ասրյանը: Հավելեց, որ գործող կարգի համաձայն՝ անձին որպես պրոֆեսորի օգնական ներգրավելու երաշխավորությունը սահմանված ժամկետում քննարկվել է Կառավարման և գործարարության ամբիոնի նիստում:

**2.** Դեկան Կ. Խաչատրյանը առաջարկեց պրոֆեսորի օգնականներ նշանակելու վերաբերյալ Կառավարման և գործարարության ամբիոնի ընդունած որոշումը հաստատել քվեարկությամբ:

Քվեարկության արդյունքներն են՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**4.2 ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հիմք ընդունելով ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի 02.09.2026թ. թիվ 1 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ 2026-2027 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի համար.

1) ԵՊՀ Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կառլեն Գագիկի Խաչատրյանի օգնական նշանակել ամբիոնի հեռակա ուսուցմամբ 2-րդ տարվա ասպիրանտ Անահիտ Խեքոյանին:

2) «Կառավարման և գործարարության» ամբիոնի վարիչ, «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի ղեկավար, դոցենտ, տ.գ.թ. Աննա Հովիկի Հակոբջանյանի օգնական նշանակել նույն կրթական ծրագրի առկա ուսուցմամբ 1-ին կուրսի մագիստրանտ Միլենա Ասատրյանին:

3) Ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Հայկ Լևոնի Սարգսյանի օգնական նշանակել ամբիոնի հեռակա ուսուցմամբ 2-րդ տարվա ասպիրանտ Հայարփի Ավետիսյանին:

4) Ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Գագիկ Իշխանի Վարդանյանի օգնական նշանակել ամբիոնի առկա ուսուցմամբ 3-րդ տարվա ասպիրանտ Սիլվիա Սարգսյանին:

5) «Գործարար վարչարարություն (կառավարում)» կրթական ծրագրի ղեկավար, դոցենտ, տեխ.գ.թ. Հարություն Վարազդատի Զաքոյանի օգնական նշանակել նույն կրթական ծրագրի առկա ուսուցմամբ 2-րդ կուրսի մագիստրանտ Սեդա Պողոսյանին:

6) Ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ, դոցենտ, տ.գ.թ. Վարդան Սամվելի Ալեքսանյանի օգնական նշանակել ամբիոնի առկա ուսուցմամբ 1-ին տարվա ասպիրանտ Սաթի Թադևոսյանին:

7) «Կառավարում» կրթական ծրագրի ղեկավար, դոցենտ, տ.գ.թ. Նոննա Նիկոլայի Խաչատրյանի օգնական նշանակել «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի առկա ուսուցմամբ 1-ին կուրսի մագիստրանտ Սիրուշո Դավթյանին:

8) Ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Կարինե Նիկոլայի Ասրյանի օգնական նշանակել «Շուկայագիտություն (մարքեթինգ)» կրթական ծրագրի առկա ուսուցմամբ 1-ին կուրսի մագիստրանտ Վարսինե Հովհաննիսյանին:

**4.3 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսորի օգնականներ նշանակելու մասին հարցը:

**4.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

1. Ֆինանսահաշվային ամբիոնի պրոֆեսորի օգնականներ նշանակելու միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տ.գ.թ., դոցենտ Գ. Սահակյանը՝ նշելով, որ պրոֆեսորի օգնական ունենալու ցանկություն է հայտնել ամբիոնի 1 աշխատակից՝ դոցենտ, տ.գ.թ. Գ. Սահակյանը: Գործընթացը կազմակերպվել է գործող կարգի պահանջներին համապատասխան, և պրոֆեսորի օգնական նշանակելու հարցը սահմանված ժամկետում քննարկվել է Ֆինանսահաշվային ամբիոնի նիստում:

**2**. Դեկան Կ. Խաչատրյանը առաջարկեց պրոֆեսորի օգնականներ նշանակելու վերաբերյալ Ֆինանսահաշվային ամբիոնի ընդունած որոշումը հաստատել քվեարկությամբ:

Քվեարկության արդյունքներն են՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**4.3 ՈՐՈՇԵՑԻՆ.** Հիմք ընդունելով ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի 07.09.2026թ. թիվ 2 նիստի որոշումը և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ 2026-2027 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի համար Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, բակալավրի «Ֆինանսներ» կրթական ծրագրի ղեկավար, դոցենտ, տ.գ.թ. Գնել Էդուարդի Սահակյանի օգնական նշանակել «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագրի առկա ուսուցմամբ 1-ին կուրսի մագիստրանտ Հայկ Արզումանյանին:

**5. ԼՄԵՑԻՆ.** «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի արտալսարանային գործունեության գնահատման կարգը նոր խմբագրությամբ հաստատելու հարցը:

**5. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Դեկան Կ. Խաչատրյանը նշեց, որ սույն կարգն ընդունվել է 2023-2024 ուսումնական տարվա գիտական խորհրդի թիվ 2 նիստում, և դրա կիրառման լավարկման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ որոշակի խմբագրում է իրականացվել: Հավելեց, որ գիտխորհրդի անդամները էլեկտրոնային ծանուցմամբ ստացել են կարգի փոփոխված տարբերակը, որում կատարված փոփոխությունն առնչվում է Գ1 ենթաբաղադրիչի՝ «Գիտական հոդվածի հրատարակում», միավորի հաշվարկման կարգին: Կատարված փոփոխության համաձայն՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում հրատարակված յուրաքանչյուր հոդվածի համար հատկացվող 10 միավորը նախատեսվում է բաժանել հեղինակի նշած աշխատանքի վայրերի քանակին:

Հարցեր չհնչեցին: Ելույթ ունեցողներ չեղան:

**2.** Դեկան Կ. Խաչատրյանը առաջարկեց Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի արտալսարանային գործունեության գնահատման կարգը նոր խմբագրությամբ հաստատելու հարցը դնել քվեարկության:

Քվեարկության արդյունքներն են՝ 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**5. ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի արտալսարանային գործունեության գնահատման կարգը նոր խմբագրությամբ:

*ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝* *Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

*ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝* *Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*